Պարոն/Տիկին Գ. Գևորգյանին

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող պարոն Ա. Աղինյանին

_____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

*Ս. Աղինյան*_____

«22»_____10_____2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Արմեն Հունանյան,
   - Զարուհի Ստեփանյան,
   - Ռիտա Գևորգյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ,
- միջազգային համագործակցության բաժնի պետ,
- իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավանական և դատական սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Նիկոսիա, Կիպրոս, 2024 թվականի հոկտեմբերի 8-9-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական միության արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցում (EaPeReg) գործող կարգավորող մարմինների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խումբ (IRB EWG):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել Եվրոպական միության արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների

ցանցում (EaPeReg) գործող կարգավորող մարմինների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբի (IRB EWG) 17-րդ հանդիպմանը:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ Միջոցառման ընթացքում քննարկվել են IRB EWG խմբի շրջանակում «ԵՄ-ն հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնության աջակցությամբ 2023-2024 թվականին իրականացված աշխատանքները:

Ներկայացվել է EU4Digital նախաձեռնության փորձագետների կողմից մշակված կարգավորողների անկախության վերաբերյալ հաշվետվությունը, որը ընդգրկում էր ԵՄ արևելյան գործընկերության երկրների կողմից 2019 թվականից ի վեր իրականացված օրենսդրական փոփոխությունները և բարեփոխումները: Մասնավորապես նշվեց, որ հանձնաժողովը 2022 թվականի օրենսդրական բարեփխումների փաթեթը ներկայացրել է ՀՀ կառավարությանը, որը ներկայումս դեռևս գտնվում է քննարկման փուլում:

Միևնույն ժամանակ հանդիպման ընթացքում ներկայացվել է լայնաշետ հասանլիության զարգացման մոնիթորինգի արդյունքները, որի մասով EU4Digital նախաձեռնության փորձագետները ԵՄ արևելյան գործընկերության երկրների ներկայացուցիչների հետ դեռևս քննարկում են տվյալների հավաքագրման և արդյունքների հաշվարկման մեթոդաբանությունը:

Խմբի հանդիպման շրջանակում քննարկվել են նաև լայնաշերտ ինտերնետ հասանլիության շուկայի վերլուծության նախնական արդյունքները: Տվյալները ներկայումս հավագրվում են միայն ԵՄ ԱԼԳ երկու երկրների՝ Հայաստանի և Ադրբեջանի համար, քանի որ Վրաստանը և Մոլդովան արդեն իսկ իրականացրել են վերոնշյալ վերլուծությունը:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հաշվետվությունները գտնվում են քննարկման փուլում, միայն ԵՄ ԱԼԳ երկրների ներկայացուցիչների հետ համաձայնեցնելուց հետ կներկայացվեն և խմբի շրջանակում կհաստատվեն դրանց վերջնական տարբերակները:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման օրակարգը, ընթացքում ներկայացված բոլոր փաստաթղթերը, ներկայացումներն ու տեղեկատվությունը հասանելի է https://www.eap-events.eu/ehome/index.php?eventid=200279108& հղումով:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Վերոնշյալ հանդիպումների արդյունքներով պայմանավորված՝ EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ երկկող ձևաչափով կշարունակվեն տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության վերաբերյալ քննարկումները, ուստի առաջարկում ենք շարունակել

համագործակցությունը և համատեղ աշխատանքները ԵՄ ԱլԳ, ԵՄ կարգավորող մարմինների և EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ կարգավորման անկախության, լայնաշերտ ինտերնետ հասանելիության շուկայի վերլուծության և մոնիթորինգի մասով փորձի ուսումնասիրության ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում Հայաստանում դրա հետագա ներդրման նպատակով:

Միևնույն ժամանակ, առաջարկվում է խմբի և EU4Digital նախաձեռնության հետագա աշխատանքներում դիտարկել նաև ծառայությունների որակի (QoS) և սպառողների շահերի պաշպանությանը վերաբերող կարգավորումների մասով վերլուծությունների և աշխատաքային սեմինարների ներառման հնարավորությունը:

Գործուղվող ---------- 22.10.2024թ ---------- ***Ա.Հունանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 22.10.2024թ ---------- ***Զ.Ստեփանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 22.10.2024թ. ---------- ***Ռ.Գրիգորյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 850-ԳՔ, 16.08.2024թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ՝ **Արմեն Հունանյան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ՝ **Զարուհի Ստեփանյան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի գլխավոր իրավաբան՝ **Ռիտա Գևորգյան ,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Նիկոսիա / Կիպրոս /**

5. Գործուղման ժամկետները **07.10.2024-10.10.2024թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Արմեն Հունանյան	Զարուհի Ստեփանյան	Ռիտա Գևորգյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)				-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	81	81	81	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	34,698	34,698	34,698	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	138,792	138,792	138,792	416.376
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		138.792	138.792	138.792	416.376

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 14.10.2024թ.